Ներողություն ենք խնդրում, սիրելի գործընկերներ, որ նախընտրական ծրագիրը «ընդունված» ձեւով չենք կազմել, բացակայում են «լիրիկան» և մնացած ատրիբուտները:

Պալատի ապագա Խորհրդից ակնկալում ենք աշխատանք, որի արդյունքում.

1. Կնվազի Պալատ վճարվող անդամավճարի չափը: Դրա տեղն ու հնարավորությունը կա: Ապագայում կարծում ենք, առհասարակ անհրաժեշտ է անցնել անդամավճարի չափի տարբերակված մոդելին: Համաձայնե՛ք, որ սկսնակ փաստաբանի եւ տարիների փորձ ունեցող ու շուկայում իր տեղը գրավված փաստաբանի կողմից վճարվող անդամավճարի չափը նույնը լինել չիկարող:
2. Պալատի Խորհրդի կազմը կընդլայնվի: Անցած տարիներին համայնքը մեծացել է, ըստ էության, եռապատկվել է: Ուստի պետք է մեծանա ներկայացուցչությունը, հետևաբար նաեւ Խորհրդի կազմը (16-18 անդամ): Ընդ որում, դա, նաեւ, կբերի ընտրությունների ժամանակ անտեղի լարվածության նվազմանը:
3. Կկրճատվի Փաստաբանական դպրոցի ընդունելությունը (տարեկան 15-20 ունկընդիր): Համաձայնե՛ք, որ այն տեմպը, որով Դպրոցը փաստաբաններ է պատրաստում, շուտով բերելու է շուկայի գերհագեցվածության (մենք մերոնցով ենք խոսում):
4. Կբարձրանան հանրային պաշտպանների աշխատավարձերը (հասկանում ենք, որ դա օրենսդրական խնդիր է):
5. Կկրճատվի Պալատի աշխատակազմը, իսկ աշխատանքի ընդունելությունը կիրականացվի բացառապես մրցույթով: Որեւէ մեկը չնեղանա, բայց այսօրվա շուրջ 30 հոգանոց աշխատակազմը, մեղմ ասած, մեծ է: Պալատը նախարարություն չէ:
6. Կլուծվի Պալատի պատերին հյուրանոցի գովազդի խնդիրը: Համաձայնեք, որ Մխիթար Գոշի արձանն ու հյուրանոցի գովազդը համատեղելի չեն:
7. Դպրոցի հատակից կվերանա «աստղը»: Համաձայնեք, որ Ռուսաստանի հանցավոր աշխարհի կամ ՆԱՏՕ-ի խորհրդանիշը՝ «վասմիկանեչնիկը», Դպրոցի կենտրոնում ունենալը նորմալ չէ մի քանի պատճառներով. կամ մենք մեզ ենք անարգում կամ նրանց: Երկուսն էլ ընդունելի չեն: Իսկ եթե, ընդդիմախոսները, այնուհանդերձ, կփորձեն ապացուցել, որ աստղը պետք է մնա, ուրեմն գոնե պատին թող լինի, սիմվոլի վրայով քայլելը գեղեցիկ չէ:

ՓՊ Խորհրդի անդամության թեկնածու՝
Ալեքսանդր Սիրունյան
(արտոնագիր թիվ 8)

ՓՊ Խորհրդի անդամության թեկնածու՝
Կարեն Կիրակոսյան
(արտոնագիր թիվ 17)